

ՆՈՐ ՏԱՂԵՐ՝ ՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ՀԱՐՑՈՒՄ

Ըսէ՛, Մովսէ՛ս հորեմացի՝—
Մարգրի՞տ էր գուտ: Զուտ ոսկի՞:

×

Ո՞ր կնիքաւայրն արքայական՝
Ո՞ր ծովերէն շրտացուած
Թանգ հատերէն ունէր այդքան
Ափն — ու իր ծոցն աուցուած...

Ո՞ր կնիքաւայրն առատածուն՝
Անըսպառ ո՞ր համբերուն
Թանգ մեռազովն էր ծանրաքեռն,
— Հրքիռ տարա՛փն այդ հնչումն:

Թէ՞ Սաքեմիկն իր մարգարտէ
Մանեակն ըրաւ շատըրուան,
Որ պարանո՛ցն իր լոկ կարթէ
Հուրերն աճիռն հիացման:

Կամ Արտաշէ՞ս՝ որ վարձաւորեց
Ամբոյսներուն ցնցատին,
Բըզըփուտի բացած հանդէս,
Զուգող՝ արինն ու ոսկին:

×

հորեմացի՛դ, ըսէ մեզի՛—
Իրա՞ւ, մարգրի՞տ էր, ոսկի՞ ...:

ՎԱՀՐԱՄ ԹԱԹՈՒԼ

24-3-39

ԱՇԽԱՐՀԱԿԱԼՆ ՈՒ ԴԱՐԵՐԸ

Աւա՛դ փառացս անցաւորի...
Դարե՛ր, կը մնայ մեզմէ ի՞նչ բան:
Դրամին պատկե՞րն օգտատական:
Արձակադէզ բլու՛րը ֆարի:

Գե՞տը խմուած՝ որ կը ծիւրի:
Լո՞յսն արեւուն նետախափան:
Աւա՛դ փառացս անցաւորի...
Դարե՛ր կը մնայ մեզմէ ի՞նչ բան:

— Աշխարհակալն իսկ գո՛հ սուրի:
Յաղքանակներն՝ անպատուանդան,
Եւ առաքուր՝ բերդ ու սահման:
Լոկ սրտին խօ՛սքն այստեղ կ'ապրի՝
«Աւա՛դ փառացս անցաւորի»...:

31.7-39